

1.3. ՉՆԵՐ և սակագներ

2004թ. հունվարին ՉՆԵՐԻ փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական ՉՆԵՐԻ ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի ՉՆԵՐԻ ինդեքս ²⁾	ՉՆԵՐԻ ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքի իրացման ՉՆԵՐԻ ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների ՉՆԵՐԻ ինդեքս ⁶⁾
Հունվար	102.5	101.1	100.3	99.4	98.5	101.0
2004թ. հունվարը 2003թ. հունվարի նկատմամբ	106.3	129.7*)	102.9	96.5	101.3*)	104.5*)

*) 2004թ. հունվարի և 2003թ. հունվարի ընթացիկ ՉՆԵՐԻ ինդեքսը հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում ՉՆԵՐԻ ինդեքսը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ ՉՆԵՐԻ ինդեքսը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների ինդեքսը սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման ՉՆԵՐԻ և ծավալների հետազոտման տվյալների:


⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների ՉՆԵՐԻ և ծավալների հետազոտման տվյալների:

Սպառողական ՉՆԵՐ: 2004թ. հունվարին ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 2.5% սղած, ինչը 1.6 տոկոսային կետով ցածր է 2003թ. հունվարի ցուցանիշից (4.1%): Գնաճը հիմնականում պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների ՉՆԵՐԻ սեզոնային փոփոխություններով:

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնաճը կազմել է 3.6%, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.2%, իսկ ծառայությունների սակագները մնացել են 2003թ. դեկտեմբերի սակագների մակարդակին:


ՉՆԵՐԻ, սակագների աճի տեմպերը 2003-2004թթ. հունվարին

(նախորդ տարվա հունվարի նկատմամբ, %)



Սպառողական գների հավելաճը 1995-2004թթ. հունվարին


(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2004թ. հունվարին 2003թ. հունվարի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 106.3%, այդ թվում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 108.9%, ոչ պարենային ապրանքների՝ 100.2%, ծառայությունների սակագների՝ 101.7%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2004թ. հունվարին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)




Արտարժութային շուկա: 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական և արժութային շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի, համապատասխանաբար, 2.5% և 0.5% հավելաճ: 2003թ. հունվարին 2002թ. դեկտեմբերի նկատմամբ սպառողական գների 4.1% հավելաճն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 0.3% նվազումով:

2004թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը կազմել է 568.52 դրամ, ինչը 2.5%-ով ցածր է 2003թ. հունվարի համապատասխան ցուցանիշից (582.98 դրամ):

Պարենային ապրանքների գներ: 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 4.0% գնաճ, ինչը, սեզոնայնությամբ պայմանավորված, մրգի, բանջարեղենի զգալի գնաճի արդյունք է: Հարկ է նշել, որ դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 11-ում գրանցվել է 0.1-23.3% գնաճ, ինչով էլ հիմնականում բացատրվում է նշված ժամանակահատվածում սպառողական շուկայում արձանագրված ընդհանուր գնաճի երևույթը:

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում գրանցվել է 23.3% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է լուլիկի (60.5%), վարունգի (57.4%), ճակնդեղի (42.5%), գազարի (39.5%), կաղամբի (33.0%), գնաճով: Գլուխ սոխի գնաճը նշված ժամանակահատվածում կազմել է 20.6%, իսկ կարտոֆիլի գինը նվազել է 1.1%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 14.0-26.3% գնաճ: Գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք.Երևանում:

Մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվարին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Մրգի ապրանքախմբում 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 13.7% գնաճ, ինչը մեծապես պայմանավորվել է տանձի (27.0%), խաղողի (22.7%), խնձորի (19.7%) գնաճով: Ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից նարնջի, կիտրոնի, մանդարինի, ադամաթզի գներն աճել են 0.6-30.4%:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում մրգի գնաճը կազմել է 7.3-22.8% (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Գյումրիում): Մայրաքաղաքում գրանցվել է մրգի 13.3% գնաճ:

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 3.0% գնաճ, ինչը ոչխարի (9.8%), խոզի (6.0%), տավարի (4.8%) մսի գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է մսամթերքի 0.2-7.5% գնաճ, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վանաձորում: Երևանում մսամթերքի գնաճը կազմել է 3.5%:

Չվի միջին հանրապետական գինը 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ աճել է 2.4%-ով, ինչը դիտարկված 9 քաղաքներում արձանագրված 0.6-11.6% գնաճի արդյունք է:

Կենդանական և բուսական յուղի գնաճը 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 2.4%, պայմանավորված կարագի 4.4% գնաճով: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում կենդանական և բուսական յուղի գներն աճել են 1.1-5.0% (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Սարտունիում), իսկ ք. Թալինում գրանցվել է 2.5% գնանկում:

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է կաթնամթերքի 1.4% գնաճ, ինչը թարմ կաթի 1.6% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում կաթնամթերքի գնաճը կազմել է 0.1-4.3%, իսկ Գյումրի և Եղեգնաձոր քաղաքներում պահպանվել է գների 2003թ. դեկտեմբերի մակարդակը:

Սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ոգելից խմիչքի, հրուշակեղենի, հացամթերքի ապրանքախմբերում 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 0.1-1.3% գնաճ, իսկ շաքարավազի գինը 2003թ. դեկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ:

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ ձկնամթերքի ապրանքախմբում գրանցված զգալի գնանկումը (37.4%) հիմնականում պայմանավորվել է թարմ և ապխտած «սիգ» տեսակի ձկան, համապատասխանաբար, 40.7% և 38.3% գնանկումով: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում հունվարին գրանցվել է ձկնամթերքի 49.0-2.1% գնանկում (գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Երևանում), իսկ Եղեգնաձոր և Թալին քաղաքներում՝ համապատասխանաբար, 0.5% և 0.7% գնաճ:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցված գների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում գրանցվել է ոգելից խմիչքի 0.2% գնաճ, իսկ ծխախոտի գները 2003թ. դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(%)

	2004թ. հունվարը		
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ [↗]
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	103.6	108.9	117.4
Պարենային ապրանքներ	104.0	109.5	119.3
հացամթերք	101.3	132.4	132.8
մսամթերք	103.0	109.9	112.4
ձկնամթերք	62.6	82.6	70.8
կաթնամթերք	101.4	98.1	99.7
ծու	102.4	103.5	133.0
կենդանական և բուսական յուղ	102.4	108.4	111.0
միրգ	113.7	93.3	130.1
բանջարեղեն և կարտոֆիլ	123.3	91.7	127.4
շաքարավազ	100.0	95.6	98.2
սուրճ, թեյ, կակաո	100.1	100.0	100.9
հրուշակեղեն	101.2	99.5	102.9
այլ մթերքներ	100.1	99.6	99.4
ոչ ոգելից խմիչք	100.8	103.3	104.6
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	100.0	102.8	102.2

Ոչ պարենային ապրանքների գներ: Ոչ պարենային ապրանքների շուկայում 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցված 0.2% գնաճը հիմնականում պայմանավորվել է ոսկերչական ապրանքների՝ 2.3%, վառելիքի՝ 0.8%, կահույքի՝ 0.3% գնաճով: Նշված ժամանակահատվածում խոհանոցային սպասքի, շինանյութերի, գրենական պիտույքների, գեղահարդարման ապրանքների, դեղամիջոցների, կենցաղային էլեկտրա-ապրանքների գներն աճել են 0.1-0.2%-ով: Կոշկեղենի, գորգեղենի, այգեգործական, անձնա-պիտո ապրանքների ապրանքախմբերում գրանցվել է 0.3-0.1% գնանկում, իսկ հագուստի և կտորեղենի, տեքստիլեղենի, մշակույթի ապրանքների, լվացամիջոցների գները 2003թ. դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ բենզինի գինն աճել է 2.0%, իսկ դիզելային վառելիքի գծով արձանագրվել է 2.5% գնանկում:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%)

	2004թ. հունվարը		
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ [↗]
Ոչ պարենային ապրանքներ <i>այդ թվում.</i>	100.2	100.3	103.0
հագուստ և կտորեղեն	100.0	99.5	102.2
վառելիք	100.8	100.5	129.8
կահույք	100.3	98.3	99.6

	2004թ. հունվարը		
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ ^{*)}
գորգեղեն	99.9	99.9	103.6
տեքստիլեղեն	100.0	97.6	97.8
կենցաղային էլեկտրաապրանքներ	100.2	101.0	101.7
խոհանոցային սպասք	100.1	101.5	102.2
լվացամիջոցներ	100.0	101.4	101.3
շինանյութեր	100.1	99.9	99.0
այգեգործական ապրանքներ	99.9	107.3	104.7
դեղամիջոցներ	100.2	95.6	92.9
անձնական օգտագործման մեքենա ներ և բենզին	101.5	104.0	110.0
մշակույթի ապրանքներ	100.0	98.5	97.4
գրենական պիտույքներ	100.1	100.4	99.8
զեղահարդարման ապրանքներ	100.1	100.7	101.2
ոսկերչական ապրանքներ	102.3	112.4	126.0
անձնապիտո ապրանքներ	99.9	99.0	99.5

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գրանցված սակագների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում որոշ ծառայությունների գծով սակագների փոփոխություններ են գրանցվել թե՛ աճման, թե՛ նվազման միտումով: Տրանսպորտի ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.4% հավելաճ՝ պայմանավորված միջքաղաքային տրանսպորտի ծառայությունների սակագների 0.6% հավելաճով: Կապի ծառայությունների հավելաճը նշված ժամանակահատվածում կազմել է 0.9%, բուժսպասարկման ծառայություններիը՝ 0.2%, իրավական ու բանկային ծառայություններիը՝ 0.2%, կրթության համակարգինը՝ 0.1%: Դրան զուգընթաց, մշակույթի, բնակարանային-կոմունալ, հանգստի կազմակերպման ծառայությունների սակագները նվազել են 4.5-0.2%, իսկ կենցաղային և հանրային սննդի ծառայությունների սակագները 2003թ. դեկտեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

	2004 թ. հունվարը		
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ ^{*)}
Ծառայություններ, ընդամենը	100.0	101.7	102.6
<i>այդ թվում.</i>			
կենցաղային	100.0	99.4	99.4
բնակարանային-կոմունալ	99.6	99.6	99.7

^{*)} ԱՄՆ Տվյալների տարածման հատուկ ստանդարտին Հայաստանի Հանրապետության անդամակցության կապակցությամբ, ՀՀ-ում սպառողական զների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունում կատարվել է փոփոխություն: Որպես բազիսային ժամանակաշրջան ընդունվել է 2002 թվականը: Նախորդ տարիներին յուրաքանչյուր տարվա համար որպես բազիսային ժամանակաշրջան ընդունվում էր նախորդ տարվա դեկտեմբերը և կատարվում էր սպառողական զամբյուղի վերահաշվարկ՝ հիմք ընդունելով տնային տնտեսությունների սպառման համար կատարված ծախսումների վերաբերյալ հետազոտության արդյունքները: 2004թ. հունվարից սկսած սպառողական զների ինդեքսի հաշվարկը կատարվում է 2002թ.-ի միջին տարեկանի նկատմամբ (հաշվարկային աղյուսակներում 1-ին տողը) և նախորդ ամսվա նկատմամբ (հաշվարկային աղյուսակներում 2-րդ տողը): ԱՄՆ-ի վիճակագրության դեպարտամենտի առաջարկով, ինչը նաև վերը նշված ստանդարտի պահանջներից է, զների ինդեքսի հաշվարկման համար հիմք է ընդունվում անփոփոխ զամբյուղ՝ առնվազն 3-5 տարվա համար, երկարաժամկետ միջակայքում համադրումներ ապահովելու նկատառումներով: Միջազգային վիճակագրական պրակտիկան ցուցանում է, որ 3-5 տարվա միջակայքում սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանք-ծառայությունների տեսակարար կշիռների փոփոխությունները, որպես կանոն, էական չեն լինում:

Մինչ հիշատակված ժամանակահատվածի ավարտը սպառողական զամբյուղի վերահաշվարկ (բազիսային ժամանակաշրջանի փոփոխություն) հնարավոր է կատարել միայն բացառիկ դեպքերում՝ սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռների էական տատանումների դեպքում, համաձայնեցնելով ԱՄՆ-ի վիճակագրության դեպարտամենտի հետ:

	2004 թ. հունվարը		
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ ^{*)}
բուժսպասարկման	100.2	101.3	100.8
տրանսպորտի	100.4	106.5	108.1
կապի	100.9	104.3	109.9
մշակույթի	95.5	118.9	119.4
կրթության համակարգի	100.1	98.5	100.8
հանգստի կազմակերպման	99.8	101.2	100.7
հանրային սննդի	100.0	102.4	104.7
իրավական և բանկային	100.2	100.0	100.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները. 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում սպառողական գներն աճել են 1.4-3.0%-ով, ընդ որում գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 2.7%-ով:

Պարենային ապրանքների շուկայում 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է 2.3-4.8% գնաճ, ընդ որում գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում պարենային ապրանքների գնաճը կազմել է 4.3%:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2004թ. հունվարի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պա- նիր	Կա- րագ	Բուսա- կան յուղ, լիտր	Չու, տաս- նյակի համար	Շաքա- րա- վազ	Կար- տոֆիլ	Գլուխ սոխ	Կա- ղամբ	Խնձոր
ԳՂ, միջինը	1253	1261	1628	690	530	256	127	348	95	273
<i>այդ թվում.</i>										
Երևան	1246	1275	1625	678	527	258	129	338	103	257
Գյումրի	1175	1275	1615	710	563	268	128	363	63	350
Վանաձոր	1316	1216	1600	686	538	235	123	366	66	300
Վաղարշապատ	1300	1233	1600	680	540	240	120	300	100	300
Թալին	1300	1200	1600	750	500	250	150	400	100	350
Դիլիջան	1300	1200	1700	750	550	260	150	350	100	300
Հրազդան, Չարենցավան	1300	1280	1600	710	525	251	120	375	100	200
Եղեգնաձոր	1400	1200	1600	700	550	240	150	350	150	500
Մարտունի	1150	1200	1700	700	500	260	80	400	55	300
Կապան	1240	1300	1740	738	550	266	148	350	80	250

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2004թ. հունվարի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6461 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Եղեգնաձորում՝ 6840 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Մարտունիում՝ 6345 դրամ), ինչը 9.4% գերազանցել է նույնանուն ապրանքատեսակների 2003թ. հունվարի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5905դրամ):

Հանրապետությունում դիտարկված 6 քաղաքներում 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.4% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Երևան և Հրազդան (Չարենցավան) քաղաքներում), 3 քաղաքներում՝ 0.7-0.1% գնանկում, իսկ ք. Մարտունիում պահպանվել է ոչ պարենային ապրանքների գների 2003թ. դեկտեմբերի մակարդակը:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ հետազոտված քաղաքներից 5-ում գրանցվել է սակագների 0.1-0.2% հավելաճ, 3-ում՝ 0.5-0.2% նվազում, իսկ Վաղարշապատ և Դիլիջան քաղաքներում պահպանվել է սակագների 2003թ. դեկտեմբերի մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

(%)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչք և ծխախոտ	ոչ պարենային ապրանքների	
ԳՂ, ընդամենը	102.5	103.0	104.0	100.0	100.2	100.0
<i>այդ թվում.</i>						
Երևան	102.7	103.3	104.3	100.0	100.4	100.2
Գյումրի	102.1	102.6	103.4	100.0	100.2	100.1
Վանաձոր	103.0	103.6	104.8	99.4	100.3	99.8
Վաղարշապատ	102.4	102.8	103.8	100.4	99.6	100.0
Թալին	102.7	103.3	104.4	100.0	99.9	100.2
Դիլիջան	102.7	103.3	104.6	100.0	99.3	100.0
Հրազդան, Չարենցավան	101.4	101.8	102.3	100.1	100.4	99.6
Եղեգնաձոր	102.5	103.0	104.1	100.0	100.1	100.1
Մարտունի	102.1	102.6	103.6	100.1	100.0	99.5
Կապան	101.7	101.8	102.6	100.0	100.3	100.1

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը: 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 1.1% գնաճ:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

(%)

	2004 թ. հունվարը		
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հունվարի նկատմամբ	2002թ. նկատմամբ ^{*)}
Ամբողջ արդյունաբերությունը	101.1	129.7	128.3
<i>այդ թվում</i>			
էլեկտրաէներգետիկա	106.4	98.3	102.1
գունավոր մետալուրգիա	91.4	157.8	171.9
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	97.7	117.5	125.8
մեքենաշինություն	94.1	96.0	93.5
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	135.4	412.0	166.6
անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն	100.1	101.6	101.7
չինանյութերի արդյունաբերություն	102.5	102.0	104.1
թեթև արդյունաբերություն	102.5	117.7	129.2
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	100.2	126.9	125.8
հրատարակչական գործերի արտադրություն	95.9	86.1	101.9

Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը: 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է տրանսպորտի բոլոր տեսակներով բեռնափոխադրումների սակագների 0.6% նվազում, ինչը հիմնականում ավտոմոբիլային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 1.0% և 0.8% նվազման արդյունք է: Նշված ժամանակահատվածում օդային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագներն աճել են 1.9%-ով, իսկ երկաթուղային տրանսպորտում պահպանվել է սակագների 2003թ. դեկտեմբերի մակարդակը:

2004թ. հունվարին 2003թ. հունվարի համեմատ տրանսպորտի բոլոր տեսակներով

^{*) ԱՄՅ Տվյալների տարածման հատուկ ստանդարտին Հայաստանի Հանրապետության անդամակցության կապակցությամբ ԳՂ-ում արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունում կատարվել է փոփոխություն: 2004թ. հունվարից սկսած արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկը կատարվում է 2002 թ.-ի միջին տարեկանի նկատմամբ և նախորդ ամսվա նկատմամբ:}

բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 96.5%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 96.8%, ավտոմոբիլայինով՝ 99.2%, օդայինով՝ 93.9%, խողովակաշարային տրանսպորտով՝ 96.5%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը: 2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական մթերքի իրացման 1.5% գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.2% գնաճի դիմաց:

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ բուսաբուծական մթերքի իրացման գների հարաբերականորեն կայուն մակարդակի պայմաններում դիտարկվող ապրանքախմբերում գրանցվել են գնային փոփոխություններ՝ աճման և նվազման միտումով: Նշված ժամանակահատվածում հացահատիկային մշակաբույսերի, բանջարեղենի, տեխնիկական մշակաբույսերի, մեղրի իրացման գներն աճել են 0.7-11.1%, իսկ մրգի և կերային մշակաբույսերի ապրանքախմբերում գրանցվել է համապատասխանաբար 6.5% և 2.5% գնանկում:

Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ՀՀ-ում 1999-2003թթ. հունվարին (դրամով)

	Չափի միավորը	1999	2000	2001	2002	2003	2004
Ցորեն	կգ	109	103	102	100	80	146
Գարի	- „,-	112	76	80	89	83	107
Լոբի	- „,-	316	333	412	420	407	384
Կարտոֆիլ	- „,-	91	92	118	125	141	93
Կաղամբ	- „,-	59	26	92	37	38	42
Գազար	- „,-	56	49	51	45	48	70
Գլուխ սոխ	- „,-	97	57	193	160	...	279
Խնձոր	- „,-	136	118	133	142	146	138
Տանձ	- „,-	206	104	132	140	209	155
Խաղող	- „,-	246	244	...	200	317	274
Ընկույզ (կեղևով)	- „,-	785	661	756	921	928	986
Մեղր	- „,-	2488	2463	2691	2603	2507	2440
Միս տավարի	- „,-	858	811	809	898	889	964
Միս ոչխարի	- „,-	673	750	791	731	866	873
Միս խոզի	- „,-	899	817	1020	1017	858	1122
Կաթ	լ	119	112	121	117	125	119
Մածուն	- „,-	194	178	178	186	182	188
Պանիր (յուղոտ)	կգ	953	867	890	844	818	826
Չուլ	հատ	51	48	46	44	48	50
Միամյա խոտեր	կգ	22	21	40	18	19	29
Բազմամյա խոտեր	- „,-	27	21	32	31	...	27

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է անասնապահական մթերքի իրացման 2.2% գնանկում, ինչը հիմնականում մսամթերքի 2.2%, կաշվեհումքի 2.6% և բրդի 14.1% գնանկման արդյունք է: Կաթնամթերքի և ձվի գնանկումը նշված ժամանակահատվածում կազմել է 2.1% :

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2004թ. հունվարին		2004թ. հունվարին	
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հունվարի նկատմամբ	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2003թ. հունվարի նկատմամբ
ՀՀ, ընդամենը	98.5	101.3	101.0	104.5
այդ թվում.				
Արագածոտն	103.0	102.2	104.3	102.2
Արարատ	103.2	96.9	105.9	99.7

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2004թ. հունվարին		2004թ. հունվարին	
Արմավիր	105.6	106.9	99.2	98.3
Գեղարքունիք	99.9	85.8	99.6	107.0
Լոռի	108.4	116.6	103.3	103.9
Կոտայք	84.0	99.0	101.2	103.6
Շիրակ	96.1	113.3	101.2	102.0
Սյունիք	96.4	102.9	100.4	97.9
Վայոց ձոր	105.8	100.9	106.3	102.1
Տավուշ	98.8	118.8	102.2	105.2

2004թ. հունվարին 2003թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 1.0% հավելաճը պայմանավորվել է գյուղատնտեսական մանր գործիքների (65.6%), սերմացուների և տնկիների (10.5%), անասնակերի (3.0%) գնման գների և գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների (15.3%) հավելաճով: Նշված ժամանակահատվածում էներգիայի և քսայուղերի գնման գներն աճել են 0.4%: Անասունների, պարարտանյութերի, մեքենասարքավորումների և պահեստամասերի գնման գները նվազել են 10.0-4.5%, իսկ բույսերի պաշտպանության միջոցներինը և շինանյութերինը մնացել են 2003թ. դեկտեմբերի գների մակարդակին: